ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2024թվականի N 1583

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հրազդանի համայնքապետարանի կողմից 2024 թվականի նոյեմբերի 18-ին հայտարարված «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/69» ծածկագրով գնման ընթացակարգին անհատ ձեռնարկատեր Գևորգ Հարությունյանը ներկայացրել է մասնակցության հայտ: Որոշ չափաբաժինների մասով առաջի տեղ զբաղեցրած մասնակից՝ Անհատ ձեռնարկատեր Գևորգ Հարությունյանի հայտը գնահատելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես կազմակերպության կողմից չէր ներկայացվել Հավելված 1.1՝ ապրանքի տեխնիկական բնութագիրը, ուստի «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/69» ծածկագրով գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց գնահատող հանձնաժողովի նիստը և «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/69» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից անհամապատասխանության շտկման ծանուցում է ուղարկվել Անհատ ձեռնարկատեր Գևորգ Հարությունյանին, սակայն վերջինիս կողմից չի շտկվել հայտը, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է և դիտվել որպես գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Անհատ ձեռնարկատեր Գևորգ Հարությունյանին (ՀՎՀՀ՝ 40545469) երկու տարի ժամկետով ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.Սույն որոշման օրինակը ուղարկել Անհատ ձեռնարկատեր Գևորգ Հարությունյանին

և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

3.Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում է Հրազդան համայնքի ղեկավար Սևակ Միքայելյանը:

4.Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել՝ այն ստանալու պահից հաշված երեսուն օրացուցային օրվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

25 դեկտեմբերի 2024թ.
ք.Հրազդան